

Գոնիացին, գեղարուեստ ըսելով, կը ճանչնայ պորտախաղը, «Գոնեալը»ի նմանամերձ երգերը: Լեզու ըսելով՝ կը հասկնայ թրթերէնը եւ քաղաքակրթութիւն ըսելով՝ կը հասկնայ «թեմէնսահ»ը եւ «բէյֆ»ը: Ու հազար անգամ կ'ափսոսայ, որ այդ գլուխգործոցները յամրաբար կը չքանան աշխարհի երեսէն, ինչպէս նաեւ մեր մէջէն: Կը բացագանչէ.

-Յէ՛յ վախ, հէ՛յ վախ, սանկ բերնի համով ֆարսի թուրքերէն մը խօսելու համար մարդ չմնաց, փաշա, պէյ, էֆէնտի, հանըմ էֆէնտի չմնաց, համ հոտ չմնաց, կազէլ, մանի, շարգի, նիհաւէնտ, սապահի, հիճագբեար քիւրտի չմնաց, աշխարհ, կեանք, պատիւ, արուեստ չմնաց...

Օր մը Գոնիացին այս մասին իր ցաւը կը յայտնէ Թուրքի մը, իսկ Թուրքը իրեն կը պատասխանէ՝ ըսելով.

-Գոնիացի, փոխէ սա Թուրքի գլուխդ:

*

Անշուշտ, ամէն Գոնիացի մեր նկարագրած Գոնիացիին պէս չէ, բարեբախտաբար: Եւ սակայն, դժբախտաբար, բազմահազար Հայեր կան, որոնք նման են մեր ներկայացուցած Գոնիացիին:

Կը յուսանք եւ կը հաւատանք, որ անոնցմէ շատերը, մօտերս, դիմում պիտի կատարեն, ուր որ անկ է, *նաթիւրալիզէ* հայ ըլլալու համար: